

396:331


69

ԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՅՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ԱԳԻՏ-ԲԱԺԻՆ

ԱԳՁ
140

№ 2

ԳՐԱԴԵՏԱՐԱՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐԱՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔԻ



ԿՈՒՆՏԱՅ

ԲԱՆՎՈՐՈՒՅԻՆ —

Մ Ա Յ Ր

Թարգմանից Սիրահույս Զախ.

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1922 թ.



140-497

ԳՊՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱՏԵՍՉԻ ԿԻՆՈ — ՄԱՐԻԱՄԻԿՈ

Մարիամիկը հղի յե: Պարոն վերատեսչի տանը տոնական հոգատարությունն և տիրում: Հապա ինչպե՞ս՝ Մարիամիկը պատրաստվում և իր ամուսնունն մի ժառանգ նվիրաբերելու: Կ'լինի մեկը, վորին կարելի կը լինի հանձնել կարողությունը՝ բանվոր-բանվորուհիների ձեռքի ստեղծածը:

Բժիշկը պատվիրել և մեծ զգուշությամբ պահպանել Մարիամիկին: Թո՞ղ Մարիամիկը չհոգնի, վո՞չ մի ծանր բան չը բարձրացնի: Թո՞ղ ուտի այն, ինչ վոր իրան դուր կը գա.— մրգե՞ր՝ տվեք նրան, մրգեր՝ թարմ ձկնկիթ (круп') մատուցեք ձկնկիթ:

— Կ'լիավորն այն և, վոր Մարիամիկը հոգս ու վիշտ չը պիտի ունենա: Այն ժամանակ յերեխան կը ծնվի առողջ, ամուր, այն ժամանակ ծննդաբերությունն էլ թեթև կանցնի և Մարիամիկը չի կորցնի իր առողջությունը:

Այսպես են խոսում գործարանի պարոն վերատեսչի ընտանիքում, այսպես և ընդունված վարվել հղի կնոջ հետ այն ընտանիքներում, ուր քսակները լիկ-լիցուն են թղթապրամներով ու վոսկով: Յեկ տիրուհի Մարիամիկին պահպանում ու խնամում են:

«Մարիամիկ, չը հոգնես», «Մարիամիկ, բազկաթոռը մի շարժիր» լավում և շարունակ տիրուհի Մարիամիկի շուրջը:

«Հղի կինը, մայրը, սրբությունն և մեզ համար»
հավատացնում են բուրժուական բանակի կեղծավոր-
ներն ու փարիսեցիները:

Այդպես և արդյոք գործնականում:

II.

ԼՎԱՅԱՐԱՐ ՄԱՐԻԱՄԻԿԸ.

Այն տանը, վորտեղ բնակվում էր գործարանի
վերատեսչի կինը, նույն տան յերրորդ բակում, չլի վա-
րագուրի հեանը, նպատաւարվում է մյուս— որավար-
ձով բանող լվացարար—Մարիամիկը:

Լվացարար Մարիամը արդեն ութերորդ ամիսն
է ինչ հղի յն: Բայց նա կը գործանար ու կը չսեր իր
աչքերը, յնի նրան ասելին.—

«Մարիամիկ, դու ծանրություններ չը պիտի
քարշ տաս, դու քեզ պիտի խնայես՝ քեզ և քո յերե-
քայի համար, մարդկության համար: Դու հղի լես, կը
նշանակէ հասարակության համար դու սրբությունն էս»

Այդպես ասողին Մարիամը կը համարեր ցնոր-
ված, կամ չարամիտ կատակող: Բանվոր դասակարգի
կինը «սրբությունն է», յերբ նա հղի և Ի՞նչիցն է
յերևում: Միթէ չեն համողվի լվացարար—Մարիամիկը
ու նրա հետ նաև չքավոր դասակարգի հարյուրավոր
և հազարավոր կանայք, վորոնք ստիպված են վաճա-
ռելու իրենց բանվորական ձեռքերը գործարանատե-
րերին, վոր անա այստեղ են նրանց կաշին քերթում
տերերը, յերբ տեսնում են, վոր կարիք խնդրում է,
վոր ել ուրիշ յեւթ չկա, վոր աշխատանքը ուժից վեր
է՝ և սակայն գնում են վատտակելու:

«Հղի կնոջը զլխավորապես հարկավոր է հանգիստ

քուն, լավ սնունդ, մաքուր ոդ, «չափավոր շարժում» —
առվորացնում են բժիշկները:

Ու կրկին հարյուրավոր հազարավոր վարձու
բանվորուհիներ, կապիտալի ստրուկուհիներ, այդպես
ասողի յերեսին կծիծաղեյին: Չափավոր պտոճյտ, մա-
քուր ոդ, հանգիստ քուն. — բանվոր դասի կա-
նանցից վնրը դիտե այդ բարեքները, վոր միմիայն
մատչելի յեն տիրուհի Մարիամիկներին:

Հուսադիմին, յերբ դեռ գիշերային խավարը մաքա-
ռում ե արշալուսի հետ, յերբ դեռևս տիրուհի Մարիամի-
կը քաղցր յերազներ ե տեսնում, — վացարար Մարիամը
վեր ե կենում իր նեղվիկ անկողնից և գնում ե խո-
նավ ու մութ վացքանոցը, վարտեղ թաց հատակի
վրա և յթաքվում ե՞ վոտքերը, վորտեղ դեռ
չեն ցամաքել ջրով լցված յերեկվա փոսերը, ուր
ներս մտնելիս յերեսիդ ե դիպչում կեղտոտ սպիտա-
կեղեցի խեղդող նիսման հոտը...

Իր բարի կամքով չէ, վոր վացարար Մարիամը
քարշ ե գալիս զզվելի վացքանոցում. նրա հեռեից
համնում ե և կանգնած ե դաժան կարիքը: Մարիամի
ամուսինը բանվոր ե: Մտացածը քիչ ե, յերկուսին
չի բավարարում: Ու լուս, սեղմելով ատամները, Մա-
րիամը կանգնում ե տաշտի սուաջ մինչև ծննդաբե-
րության ողջ, մինչև յերկունքը:

Չը կարծե՞ք, թե վացարար Մարիամի շատուղ-
ջութունը յերկաթյա առողջութուն ն՞, ինչպես վոր
տիրում են արտահայտվել տիրուհիները և ին բանվոր-
ների մասին: Լվացքի տաշտի առաջ յերկար կանգնե-
լուց վացար Մարիամի վոտքերը ծածկվել են ուռած
Ղղերով, քայլվածքը դարձել ե դանդաղ և ծանր, աչ-
քերը բոլորովին փոս են ընկել, ձեռքերը ուռել են, իսկ
գիշերները նա վաղուց արդեն կանոնավոր քուն չունի:

Ինչքան հաճախ են յեղել այն դեպքերը, յերբ նա քարշ եր առլիս թաց սպիտակեղենով լիքը ծանր կողովները: Լվացարար Մարիամը հենվում եր պատին վոր չընկնի, գլուխը պտրավում եր, աչքերը՝ սևանում... Իսկ քանի-քանի անգամ թվում եր նրան, թե թիկունքում մղկտում ե մի ահագին ցավոյ առամ և վոտքերդ չես կարոյ առաջ դնել, կարծես լցված են կապարով...

Ինչ լավ կը լիներ, յեթե պառկեր և գոնե մի ժամ հանգստանար... Բայց միթե այդ «թույլատրելի յե» վարձու բանվորուհուն: Ահա թե ինչ «քնքուշություններ»... Տիրուհի հո չ'ե:

Յեվ լվացարար Մարիամիկը լուռ համբերությամբ քարշ ե տալիս իր տաժանակիր կյանքը:

«Սրբուհիուն ե միայն այն հղի կինը. վորի թիկունքում կանգնած չե անողորմ կառիքը»:

III.

ԱՂԱՍԻՆ - ՄԱՐԻԱՄԸ .

Տիրուհի Մարիամը իր տան համար «ազախին» եր վարձել: «Աղջկանը» գյուղից էյին բերել: Տիրուհի Մարիամին դուր յեկավ աղախինը իր հնչյուն ծիծաղով, դուր յեկավ իր ծնկներից ցած կախված երկար հյճակներով, դուր ե'ավ, քանի վոր ինչպես թուշուն թրվում եր ու շարժվում տան մեջ և աշխատում ամենքին՝ ել հաճոյանալով «հեղակի վոսկի ե այս աղջիկը, վոսկի»: Ամիսը յերեք ուրբի ոռճիկ նշանակեցին նրան, սակայն յերեք հագու չափ ե աշխատանք կատարում:

Տիկին, ել բոսեր չեր գտնում նրան գովելու համար,

Ինքը «պարոնը», գործարանի վերատեսուչը սկսեց
յերբեմն-յերբեմն ծածուկ դիտել աղախնին՝ հետզհետե
ավելի ու ավելի հաճախ, ավելի ուշադրութեամբ:
Աղջիկը չի դուռ վտանգը—անփորձ է, գեղջիկուհի
յե... Ավելի սիրալիրու սիրալիր է դառնում պարոնը...
Բժիշկը հրամայել է «տիկնոջը» չը վրդովել հանգստու-
թյուն է պատվիրել: Թող նա հանգիստ կերպով կրե
իր մանկանը, վորպեսզի վոչ մի վտանգ չը պատճառե
նրան, իսկ աղախինը շարունակ պարոնի աչքին է
ընկնում: Յե՛վ անուռն էլ նույնպես Մարիամ է—
շփոթելը հեշտ է... հիմար, տգետ աղջիկ է: Վախեց-
նելը դժվար չէ... Ահից ամեն ինչի կը համաձայնվի:

Յե՛վ հղիացավ աղախին Մարիամը: Դադարել է
ծիծաղելուց: Նիհարել է Չար անհանգստությունը
որ ու գիշեր կըծում է նրա սիրտը

Իմացավ տիրուհի—Մարիամը: Խայտառակ աղ-
ժուկ բարձրացրեց: Աղախին—Մարիամին 24 ժամվա՞
ընթացքում անից դուրս շարտեցին:

Շրջում է Մարիամը քաղաքում,—վոչ բարեկամ-
ներ, վոչ անկյուն... Ո՞վ նրան կը վերցնի «այդպես»
իր «պատվավոր» տունը...

Շրջում է Մարիամը առանց հացի կտորի և ա-
նոգնական: Գետի մոտով է անցնում: Նայում է գետի
խավար ալիքներին, գարձնում է յերեսը և փակում է
աչքերը: Սառսուռ է աղղում, գետի ցուրտ, խավար
խորությունը, ձգում է նրան և սարսափեցնում:

IV.

ՆԵՐԿԱՐԱՐՈՒՆԻ—ՄԱՐԻԱՄԸ

Գործարանի ներկարարական բաժնում իրարան-
ցում է մեռածի պես դուրս բերին մի բանվորուհու:

Ի՞նչ է պատահել նրան: Թունավորվել է գոլորշիներից, թե՛ ծուխը չը կարողացավ տանել... Նորեկ հո՛ չե՛ ժամանակ է վարժվելու գործարանի դժբխքին:

«Իստարկ բան է, չեք տեսնում, ի՞նչ է», ասաց բժիշկը, հո՛ր է: Իսկ յուրաքանչյուր հղի կին ունի իր տարրինակությունները: Կարիք չըկա յերես տալու:

Ու ներկարարուհուն հետ դարձրին աշխատելու: Արհեստանոցների միջով անցում է նա իր տեղը որորվելով հարբածի պես: Ուռած վոտքերը չեն հպատակվում... Կատակ հո՛ չե՛: Ամեն որ տասը ժամ բանել թունավոր գոլորշիների, ծուխի ու վնասակար հոտերի մեջ: Տուն էս վերադառնում՝ նույնպես հանհիստ չը կա բանվորուհի մոր համար, յերբ տանը յերեխան ու պառավ կույր մայրը նստած են առանց ճաշի, յերբ գործարանից հոգնած ամուսինը, սոված-ծարավ հազիվ իրեն տուն կը հասցնի: Բոլորին կըշտացրու, բոլորի հոգսը քաշի... Նա արշալույսի հետ առաջինն է վոտի վրա և վերջինն է գնում քնելու...

Իսկ այստեղ գեռ նշանակել են արտաժամյա աշխատանք: Գործարանում աշխատանքը յեղում է: Գործարանատերը իր սզուտը բռով է հավաքում, իսկ բանվորի ավելորդ ժամերի աշխատանքը կոպեկներով է ավելացնում: Համաձայն չե՛ս՝ հայդե, դ՛նւրս: Փառք ասածո, անգործների թիվը շատ է աշխարհիս յերեսին: Ներկարարուհին ինքը անձամբ փորձեց դիմել գործարանի պարոն վերատեսչին՝ արձակուրդ խնդրելով իր համար:

— Շուտով պիտի ծնեմ: Հարկավոր է պատրաստվել, յերեթանհրս փոքր են, մայրս էլ՝ պառավ և ամբողջ անտեսությունը՝ ձեռքիս է:

Իսկ նա, լսել անգամ չուղեց:

«Յեթե յուրաքանչյուր հղի բանվորուհու ռար-

ձակուրդ» տանք, ավելի լավ և գործարանը վիակենք:
Ձեյիք պառկի ամուսիններից հետ ու չեյիք հղիանա»:

Վիրավորեց ու հայհոյեց նրան ժողովրդի ներկա-
յությամբ:

Ներկարարուհի Մարիամին մնում է քարշ գալ
աշխատանքի մինչև վերջին ժամը:

Այն, այսպիսի «պատիվ» և ստանում այժմ մայ-
րությունը բուրժուական հասարակությունից:

V

ԺՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Տիրուհի Մարիամը ծնում է— հշանավոր անցք
և՛ Տոն և՛ տոն չե, իսկ ամբողջ առևնը մեծ շարժման
մեջ է, պաշտվում են այս ու այն կողմը, Բժիշկներ,
մանկաբարձուհիներ, հիվանդապահներ...

Պառկած է ծննդկանը մաքուր, սպիտակ, փափուկ
անկողնում: Սեղանի վրա ծաղիկներ: Ամուսինը քրն-
քրությամբ կնոջ ձեռքն է համբուրում, ցրիչները նա-
մակներ ու հեռագիրներ են տանում: Քահանան գո-
հունակության մաղթանք է կատարում:

Յեվ յերեխան ծնվեց առողջ ու ժիր, իհարկե, հա-
պա ինչպես խնամում ու պահպանում էյին տիրուհի
Մարիամիկին:

Սակայն լվացարար Մարիամիկն էլ է ծնում:
Ոտար մարդկանցով լեցուն, սենյակի մի անկյունում,
չթե վարագույրի հետևը:

Ծանր է Մարիամիկի դրությունը: Տնքոցները
աշխատում է բարձի միջոցով անլսելի դարձնել: Հա-
րկանները բոլորը բանվոր մարդիկ են, լավ չե նը-
քանց զբիլ քնից և խել նրանց միակ հանգիստը:
Ղուսաղիմին յեկավ տառամերը, (տնական մանկաբար-

ձուհի): Նորածնին լողացրեց, փաթաթեց և շտապեց ուրիշ ծննդկանի մոտ:

Պառկած է այժմ Մարիամը սենյակում մենակ: Դիտում է յերեխային: Վարձան վտիտ է, նիհար, խոր շունամ... Իսկ աչքերը, կարծես, հանդիմանում են մորը ու այնպես թախծոտ հարցնում.— «Ինչո՞ւ դու ինձ ծնեցիր»: Նայում է նրան Մարիամիկը ու ինքը լուռ և անլսելի լալիս է...

Ծնեց նաև աղախին Մարիամը, քաղաքի խուլ ու հեռ ընկած մի փողոցի պատի տակ:

Դիմեց ոչ խնդրեց ծննդաբերական տները, բայց ազատ տեղ չըկար: Ուրիշ տեղեր բաղխեց—չը վերցրին. ինչվոր թղթեր պահանջեցին:

Ծնեց ու արագ քայլեց, Գնում է—որորվում նորածին մանկանը շալի մեջ և փաթաթել: Ո՞ւր,— վոչ մի տեղ:

Մտաբերեց մութ գետակը, գետի խորությունը՝ ձգող և սարսուռ ազդող:

Առափոտյան վոստիկանները գետից հանեցին խեղդված կնոջ:

Այսպես է հարգվում «մայրը» բուրժուական հասարակության մեջ:

Ներկարարուհի—Մարիամի երեխան աշխարհ յեկավ մեռած: Հարազատ մոր շնչառության միջոցով դեռ արգանդում նա գոլորշիներից թունավորել էր:

Ծննդաբերությունը շատ դժվար էր: Ինքը ներկարարուհին քիչ մնաց գնար այն աշխարհը:

Սակայն հետևյալ որը, յերեկոյան դեմ, նա արդեն վոտի վրա էր, համարում է, մաքրում է, յեփում է: Հապա ինչպես անեւ Ներկարարուհի Մարիամի փոխարեն հիմ տունը կը հավաքի և տնտեսությունը կարգի կը բերի: Երեխաներին հիվ կը կերակրի: Տիրուհի

Մարիամիկի համար իհարկե լավ է ինն որ պառկել անկողնում, ինչպես վոր պատվիրել են բժիշկները, յերբ շուրջը պարում և ծառայողների մի ամբողջ խումբ:

Ինչ անենք, վոր ներկարարհուհի Մարիամը ծննդաբերությունից անմիջապես հետո աշխատանք կատարելով, կանացի ծանր հիվանդութունն ստացավ ու իրան հաշմանդամ դարձրեց:

Ո՞վ է խնամողը բանվորուհի ծննդկանին: Ո՞վ է վերցնողը նրա ուսերից ծանր և ուժից վեր հոգսը:

«Սրբազան մայրություն» գոյությունն ունի միայն տիրուհի Մարիամիկների համար:

VI.

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԽԱՉԸ.

Տիրուհի Մարիամիկի համար մայրությունը ուրախությունն ու տոնն է:

Դույս, մարտեր մանկանոցում մեծանում և պարոն գործարանատիրոջ ժառանգը, բժշկների հսկողությամբ սովորեցրած դայակների խնամքի տակ:

Յեթե, իրեն, տիրուհի Մարիամիկի, կրծքի կաթը չի բավականանում, կամ նա չի ցանկանում իր «մարմնի ձեռ» փչացնել, — ծծմայր կը գտնեն:

Կըզվարձանամանկան հետ տիրուհի Մարիամիկը ու կը գնա շրջելու հյուր, խանութները, թատրոններ ու պարահանդեսներ...

Տիրուհի Մարիամիկի մանկիկը ունի խնամողներ, նրա համար մայրությունը աոն և և զվարճություն: Բանվորուհի — Մարիամիկների համար, ներկարարուհի, վաղցարարների, ջուլհակուհիների բանվոր դասակարգի, հարյուրավոր — հազարավոր մայրերի համար — մայրաթյունը ծանր խաչ է:

Սուլում ե գործարանի սուլոցը, կանչում ե աշխատանքի: Իսկ մանկիկը ճշում ե, լալիս. Ինչպե՞ս թողնել նրան: Ո՞ւմ հանձնել:

Բանվորուհի մայրը իբ կաթը կթում ե ծծակի մեջ, երեխային հանձնում ե պառավ հարևանուհուն, կամ իբ մանկահասակ աղջկանը: Գնում ե բանելու: Սակայն յերկրայի հողքը կրծում ու մաշում ե նրա սիրտը... Մանկահասակ քույրիկը իբ բարության շնորհիվ, կամ չը հասկանալով յերեխային աթիր (каша) կուտեցնի, կամ բերանը հաց կը խոթի:

Տիրուհի Մարիամիկի մանուկը որեցոր լավանում ե: Շաքարի պես—սպիտակ ե, խնձորի պես վարդագույն ե ե կայտառ:

Գործարանի բանվորուհու, լվայքարանի տրհեստավորուհու յերեխան որեցոր նիհարում ե: Գիշերները վտանքը կծկում ե, վախովում ե ու լալիս: Գալիս ե բժիշկը ու հայհոյում ե. —

«Ինչո՞ւ ծիծ չեք տվել: Ինչո՞ւ յեք խելքներդ փշած ամեն մի հիմար բան ուտեցրել: Այժմ, յեթե յերեխան մեռնի, դուք եք մեղավորը»:

Չեն արդարանում հարյուրավոր—հազարավոր բանվորուհի մայրեր: Կանգնած են գլխիկոր ու ծածուկ սրբում են արցունքները:

Միթե ամեն ինչ կասվի բժշկին: Միթե կը հավատան, կը հասկանան:

VII

ՄԵՌՆՈՒՄ ԵՆ ՃԱՆՃԵՐԻ ՊԵՍ

Ու մեռնում են մանկիկները—վարձու բանվորների յերեխաները,— մեռնում են ճանճերի պես...

Ռուսաստանում ամեն տարի մեռնում են մի

միլիոնից ավելի մանուկներ մինչև մի տարեկան հասակը:

Միլիոն մանուկների գերեզման թմբիկներ: Միլիոն վշտահար, սրտամորմոք մայրեր: Ուն յերեխանց և հավաքում գերանդավոր մահի, դուրս գալով դարնանային ծաղիկները—մանուկ կեանքերը հնձելու: Պարզ և, իհարկե, մահը ամենից քիչ իր հունձը հավաքում և հարուստների բնակարաններում:

Այնտեղ, ուր մանկիկը ապրում է տաք ու լնամբով, ուր նրա սնունդը մոր կամ վարձու ծծմոր կաթն է, այնտեղ աճում ու առողջանում են յերեխաները:

Արքայական ընտանիքներում 100 նորածիններից մեկնում են 6-7 փոքրիկներ: Բանվորների ընտանիքներում՝ 30-45 նորածիններ:

Այն բոլոր յերկրներում, ուր կապիտալիստներն են տերն ու տիրականը, իսկ բանվոր դասակարգը տառապում և չքավորութան մեջ ու վաճառում իր բանվորական ձեռքերը—մեռնում են շատ մանկիկներ:

Բայց ամենից շատ յերեխաներ և հնձում մահը Ռուսաստանում: Յուրաքանչյուր 100 նորածիններից մեկն է կենդանի

Նորվեգիայում	—	—	—	93 մանկիկ
Չվիցերիայում	—	—	—	89 —
Անգլիայում և Ֆինլյանդիայում	—	88	—	—
Ֆրանսիայում	—	—	—	86 —
Ավստրիայում և Հունգարիայում	—	80	—	—
Ռուսաստանում	—	—	—	72 մանկիկ:

Սակայն Ռուսաստանում կան տեղեր, կան նահանգներ, առանձնապես այն տեղերը, ուր շատ զործարաններ կան, վորտեղ 100 յերեխաներից մեկնում են 54-ը... Մեծ քաղաքների այն թաղամասերում, ուր ապրում են հարուստները—100 նորածիններից մեկ-

նում են 8-9, իսկ բանվորական թաղամասերում՝ 30-31...

Ինչո՞ւ յեն այսքան մեռնում բանվորների, պրո-
լետարների յերեխաները:

Վորպեսզի յերեխան մեծանա առողջ, ամուր և
ուժեղ՝ նրան հարկավոր է մաքուր ուղ, ջերմություն,
արև, մաքրություն, զգուշ և ուշադիր խնամք:
Նրան հարկավոր է—իր մոր կուրծքը իր բնական
սնունդը, վորից նա ամրանում և աճում է:

Բանվորական ընտանիքի վոր յերեխան ունի այն
ամենը ինչ թվիցինք:

Ուստի անտես մահը իր հաստատուն և ամուր
բույնն է հյուսում բանվորական ընտանիքներում, ուր
չքավորության շնորհիվ թագավորում է կուտակումն
ու խոնավությունը, ուր արևի ճառագայթները չեն
թափանցում նկուղները, վորովհետև ուր սովորաբար
անմաքուր է, բանվոր դասի մայրերը հնարավորություն
չունեն կատարելու իրենց սրբազան պարտականու-
թյունը՝ հոգալու ինչպես հարկավոր է իրենց մանկիկ-
ների մասին:

Գիտությունը ապացուցել է, վոր յերեխաների
ամենավտանգավոր թշնամին «արհեստական սնունդն
է», այսինքն՝ յերբ յերեխան զրկվում է մոր կաթից:

Կովի կաթով կերակրվող յերեխաները 5 անգամ
ավելի են մեռնում, քան մոր կաթով կերակրվողները:
Յեթե նորածիններին չեն կերակրում կովի կաթով,
այլ ուրիշ հազար ու մի ուտելիքներով, ապա այս
դեպքում 15 անգամ ավելի յեն մեռնում:

Իսկ բանվորուհին ինչպես կարող է ինքը կե-
րակրել յերեխաներին, յերբ աշխատում է տնից դուրս,
գործարանում, արհեստանոցում: Գեռ լավ է, յեթե
կովի կաթի համար փող հասցնի: Այդ ել սակայն միշտ

չի լինում... Դե ինչ կաթ պիտի տան կաթնավաճառները բանվորուհի-մորը. — կավիճը ջրի մեջ հալեցրած:

Դրանից ե վոր հարյուր մեռնող յերեսաներից 60-ը ստամոսի հիվանդությունից են կործանվում:

Հապա քանի՞սն են, վոր վոչնչանում են յերկրորդ պատճառից, «անկենսունակությունից» ինչպես ըփշկներն են ասում: Այդ ի՞նչ ե նշանակում: Կամ մոր կատարած ծանր աշխատանքի պատճառով յերեսան վաղածին ե լինում, կամ դեռ իր արգանդում մայրը փսասում ե յերեխային գործարանի թունավոր գոթը շինելով: Մի՞թե իրապես, կարող ե բանվոր դասակարգի կինը իր մայրական պարտականությունը կատարել:

VIII.

ՎԱՐՉՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարժամանակ, վորից շատ չենք հեռացել, ե վորը դեռ հիշում են մեր տատերը, յերբ կինը գիտեր ու կատարում եր միայն տնային աշխատանք՝ տնտեսությունը, իր տանը յեղած արհեստը:

Այն ժամանակն ել չքավոր դասի կանայք անգործ չեյին նստած. կատարում եյին տնային ծանր աշխատանք, յեփել—թափել, լվանալ, կարել—կաթկատել ու գործել, կաավ պատրաստել ու սպիտակեցնել, բանջարանոցումն ու դաշտումն աշխատել:

Սակայն այն ժամանակ կնոջ աշխատանքը յերբեք չեր բաժանում նրան որորոցից, գործարանի հաստ պատերը չեյին գատում նրան իր մանրիկ յերեսաներից... Ինչեկ վոր չլիներ՝ մանկիկը քնում եր նրա ձեռքերին:

Բայց ժամանակները փոխվեցին: Աճեցին գոր-

ծարանները, Աղքատությունը բշտում էր կնոջը անից, գործարանը նրան քաշում էր դեպի իր յերկաթե ճանկերը: Իսկ յերբ գործարանի դուռը շրխկալով փակվում է կնոջ հետևից, նրան մտում էր միայն հրաժեշտ առ մայրությանը:

Ինչ կերպ չի անում վարձու աշխատանքը կնոջ ներկա ու ապագա մոր հետ:

Ինչ կերպ սաստ վոր չի խեղում կին—մորը տերերի համար կատարած աշխատանքը: Յեթե նա ամբողջ որը չըխչըխկացնում է կարի մեքենան, ապա ստանում է արգանդի ծանր հիվանդություն, յերբ նա բանում է ջուլահանոցում, կամ մանկիւր գործարանում, ճեմապահու արդյունաբերական գործարանում, սեռիկի, լուցիկու, քիմիական գործարաններում,—վրտանգավոր գուրդիներն ու թունավոր իրերի մոտիկությունը սղղում: ու թունավորում են վնչ միայն նրան այլ դեռ ևս սաղմային վիճակում գտնվող նրա մանկանը: Յեթե նա գործ աւնի արճճի ու սնգիկի հետ, ապա դառնում է անպտղաբեր կամ ծնում է մեռած յերեխաներ և յեթե նա աշխատում է ծխախոտի զանազան գործարաններում ու շնչում է ծխախոտի թույնը, նա կործանում է յերեխային՝ թունափորում է իր կաթով: Հզի վիճակում, քաշելով ու կրելով ուժից վեր ծանրություններ, որվա կեսը կանգնելով դադգահներն ու սեղանների առջև, կամ լինելով աղախին՝ տիրուհու հրամանով սանդուխքներից վայր ու վեր գալով, նա սպանում, այլանդակում է յերեխային:

Չկա մի այնպիսի կեղտոտ, վնասակար աշխատանք, վոր այժմ չկատարիին վարձու բանվորուհիները, չկա այնպիսի մի արհեստ, ուր չը հանդիպենք հզի կամ ծրծ սվող մայրերի:

Վարձու աշխատանքը, այն պայմաններում, ինչ պայմաններում, վոր կատարում ե բանվորուհին, մայրության գերեզմանն է:

IX

ՎՈՐՆ Ե ՏԵԼՔԸ

Արժեք արդյոք բանվորուհուն յերեխաներ՝ ունենալ, յերբ նրանք ծնվում են հաշմ (սախատ), կամ վաղածին, յերբ մեռնում են վորպես ճանճեր: Արժեք արդյոք, վոր բանվորուհին կրե մայրական բոլոր տանջանքները, յերբ միջևնույն է, նա սփիլված ե իր զավակին «անխնամ» թողնելու ծնված որեց, յերբ նա հնարավորություն չունի կատարելու իր պարտականությունը, դաստիարակելու յերեխային, հոգալու նրա մասին այնպես, ինչպես ինքը կցանկանար, նըրան մարդ դարձնելու նպատակով: Ավելի լավ չե՞ հրաժարվել մայրությունից:


Շատ բանվորուհիներ զգուշանում են հիմանալուց:

Ուժերեց վեր ե դառնում մայրության խաչը:

Բայց միթե բանվոր դասակարգի կինը իրեն պիտի զրկի նաև այդ վերջին ուրախությունից:

Միթե միայն այն պատճառով, վոր կյանքը առանց այդ ել վիրավորել ե նրանց, վոր չքավորությունը հանգիստ չի տալիս, վոր գործարանը քամում ե նրանց ուժերը, բանվորուհին պիտի հրաժարվի նաև մայրական իրավունքից ու մայրական ամբողջ յերջանկությունը զիջի տիրուհի Մարիամիկներին:

Առանց կռվի ել նահանջել, չաշխատել վերապահելու իրան այն ժամանակը, վոր բնությունը տվել ե նույնիսկ ամենավերջին եակին, անրան զազանին:



Մթթե ուրիշ յեւք չըկա:

Բ'հարկե, կն:

Միայն թե դեռ ամեն մի բանվորուհի այդ չը-
զիտե:

X

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Ե ԱՅՌ ԼԻՆԵԼ:

Պատկերացնենք հիմա մի հասարակություն, փողովուրդ, պետություն, ուր այլևս չկան տիրուհի Մարիամիկներ, չկան և լվացարարուհի Մարիամիկներ: Չկան ճրիակերներ, բայց չկան նաև վարձու բանվորներ: Բոլոր մարդիկ հավասար աշխատում են, իսկ նրանց համար հասարակությունը, պետությունը հողում են ու թեթեվացնում նրանց կյանքի պայմանները:

Ճիշտ այնպես, ինչպես տիրուհի Մարիամիկների մասին մտածում ու հող են տանում նրանց ազգականները, այդպես էլ մեզ պատկերացրած հասարակությունը, վորպես մի համերաշխ մեծ ընտանիք՝ հող էր տանի ավելի թույլերի—կանանց ու յերեխաների մասին:

Յերբ Մարիամիկը (վնչ տիրուհի և վնչ ել բանվորուհի, այլ պարզապես՝ քաղաքացուհի) կը հղիանա, նա այլևս չի սարսափի, թե թնչ և պատահելու իր և իր յերեխայի հետ:

Հասարակությունը՝ մեծ համերաշխ—ընտանիքը՝ ամեն հոգատարություն վերցնում և իր վրա:

Մարիամիկի տրամադրության տակ կգտնվի ապաստարանը—ըրջապատված այգիներով, ծաղկանոցներով ու ամեն տեսակի հարմարություններով, մի տուն, ուր յուրաքանչյուր հղի կին, յուրաքանչյուր

Տննդարեր, յուրաքանչյուր ծիծ տվող մայր, իր կյանքը կանցնի ուրախ, առողջ և հարմարություններով:

Այս հասարակության ընտանիքում բժիշկների հոգատարությունը կայանում է վնչ միայն նրանում, վոր կարողանան մոր ու նորածնի առողջությունը պահպանել, այլ նաև նրանում, վոր թեթեւացնեն կրնոջ յերկունքի տանջանքները:

Գիտությունը քայլում է առաջ, գիտությունը այստեղ ևս կոգնե: Յերբ մանկիկը կը ժրե, կամբանա՝ մայրը կվերադառնա իր տունը, իր սովորական կյանքին վորպեսզի կարողանա իր բաժին աշխատանքը կատարել մեծ ընտանիք—հասարակության ոգտին:

Բայց այնուհետև ել նա չի տանջվի մանկան համար: Հասարակությունը այստեղ ել հասնում է ողնոթյան, մանկանոցներում, գաղութներում, մանկապարտեզներում և դպրոցներում յերեխաները կմեծանան փորձված դայակների՝ հակողության ներքո: Յերբ մայրը ցանկանա,—յերեխաները միշտ իրեն հետ կը լինեն:

Իսկ յեթե նա ժամանակ չունի, նա գիտե վոր յերեխան վատահելի մարդկանց ձեռքին է:

Այլևս չի լինի մայրության ծանր խաչը: Յուրաքանչոք կնոջ կը մնա միայն այն ուրախությունը, միայն մայրական մեծ յերջանկությունը, վորից հիմա ոգտվում են միայն տիրուհի Մարիամիկները:

Բայց արդոյք յերազ չե՞ այդպիսի հասարակարդը: Կմրող և այդ լինել:

Ժողովուրդների տնտեսությունը, հասարակական ու պետական կյանքի պատմությունը ցույց են տալիս, վոր այդպիսի հասարակություն պիտի լինի և կը լինի, թեկուզ ինչքան ել դիմադրեն հարուստ—կապիտալիստները, գործարանատերերը, կալվածատերերը,

սեփականատերերը՝ այնուամենայնիվ «հեքիաթը» կատարվելու յե, դառնալու յե իրողություն:

Այդ «իրողության» համար այժմ ել ամբողջ աշխարհում բանվոր դասակարգը պայքարում է: Յեվ յեթե դեռ հեռու յենք այն ժամանակից, յերբ հասարակությունը լինելու յե մի համերաշխ ընտանիք, յեթե դեռ սրանից հետո շատ կոխիլներ ու զոհեր ենք տալու, այնուամենայնիվ հաստատ է այն, վոր արդեն այժմ ուրիշ յնրկրներում բանվորները շատ բան են ձեռք բերել:

Բանվորներն ու բանվորուհիները ջանում են, չարչարվում են որենքներով և ամեն կերպ թեթեփացնելու բանվորուհու մայրության խաչը:

XI

ԻՆՉ ԿԱՐՈՂ Ե ԱՆԵԼ ՈՐԵՆՔԸ:

Նախ՝ ինչ կարող են անել ու ինչի՞ն են ձգտում թուր յերկրների բանվորներն ու բանվորուհիները. — այդ այն է՝ ստիպել պահպանելու բանվորուհի մտը:

Քանի վոր ազբատությունը և անապահով վիճակը ըշում են կնոջը դեպի վարձու աշխատանքը, քանի վոր տարեց-տարի աճում է վարձու կանանց, բանվորուհիների թիվը, զոնե պիտի անել այնպես, վոր վարձու աշխատանքը չը դառնա մայրության գերեզմանը:

Որենքը պիտի միջամտե, որենքը պիտի ոգնե կնոջը՝ համաձայնեցնելու իրար մայրությունն ու աշխատանքը:

Թուր յերկրների բանվորներն ու բանվորուհիները պահանջում են թուրրովին արգելել կանանց և անչափահասների դիշերային աշխատանքը:

Ութ ժամյա բանվորական որ՝ վարձով աշխատող բոլոր բանվորների համար, արգելել 16 տարեկանից փոքր յերեսաներին վերցնելու աշխատանքի: Իսկ անչափահաս աղջիկներին, վորոնք 16 տարեկանից մեծ են, թույլ տալ բանելու միայն կես որ: Այս պահանջը կարևոր է ապագա մայրերի համար, 16—18 տարին կնոջ կյանքի վճռական տարիներն են, այս շրջաններումն է աղջիկը ամրանում, ձեվակերպվում, զարգանում վորպես կին: Յեթե այդ տարիներում խլենք նրա ուժը՝ ապա ընդմիշտ նա վտանգված ու զրկված կը լինի առողջ մայրությունից:

Որենքը պիտի խստորին հեռևի, վորպեսզի աշխատանքի ու արհեստանոցի պայմանները չփխսան կնոջ առողջութիւնը.— ապրանք պատրաստելու վտանգավոր միջոցները պիտի կամ փոխարինվին վնչ վնասակարի, կամ բոլորովին արգելվեն ծանր աշխատանքները (ծանրություններ քաշելը, դազգահների մոտ աշխատելը և այլն) թեթևացնել մեքենաների միջոցով, արհեստանոցները պահել մաքուր ու կանոնավոր, վոչ պիտի անտանելի շոգ լինի և վոչ ել՝ անխիղճ ցուրտ, մաքուր պիտի պահել ճաշարանները, լվացքարանները և մյուս այլ կարևոր տեղերը: Այդ բոլորը կարելի է ունենալն, ցուցադրած որինակելի գործարաններում այդ բոլոր.— արդեն կատարված է, սակայն գործարանատերերը ժլատ են: Բոլոր քմեռած հարմարությունները, կատարելագործությունները թանկ արժեն, իսկ մարդկային կյանքը այնպես արժան է... Անչափ կարևոր է նույնպես, վոր որենքը ամենուրեք, ուր հարավոր է, պահանջեր աշխատող կանանց համար նստելու հարմարություններ: Նաև այն, վոր նշանակեր զգալի տուգանք այն գործարանատերերին, վորոնք կը խախտեն որենքը:

Պիտի նշանակվի հսկողութիւն, վոր որենքի բո-
լոր կետերը գործադրվին, ուստի չը պիտի բավարար-
վիլ միայն գործարանի վերատեսչով, այլ սահմանել
նաև բանվորներին ընտրված ներկայացուցչութիւն:

XII.

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բացի վերոհիշյալ կետերը, որենքը պարտավոր է
պահպանելու և մորը:

Այժմ մեզանում, Սորհուրդների որենքով, բան-
վորունին ծննդաբերութեան ժամանակ չորս ամիս ար-
ձակուրդի իրավունք ունի:

Գերմանիայում, Ֆրանսիայում և Չվիցերիա-
յում, որինակ— ծննդաբերը իրավունք ունի արտա-
կարգ ստանալու նախ քան ծնելը ու ծննդին հետո
ընդամենը ութ շաբաթ, առանց իր տեղին զրկվելու:

Բայց հասկանալի է, վոր այդ ժամանակամիջոցը
քիչ է:

Բանվորական կուսակցութիւնը պահանջում է.
ծննդաբերին տալ արտակարգ 2 ամիս մինչև ծնելը և
2 ամիս ծնելուց հետո, ընդամենը՝ 4 ամիս հանգստու-
թիւն, ինչպես վոր է այժմս Սորհրդային յերկրնե-
րում:

Բացի այս, որենքը պիտի պահանջի, վոր յուրա-
քանչյուր ծիծ ազող մորը բանվորական որվա ըն-
թացքում ընդմիջում տրվի յերեսային կերակրելու
համար: Նման պահանջներ արդեն գոյութիւն ունին
Իտալիայի և Սպանիայի որենսդրութեան մեջ:

Որենքը պարտավոր է պահանջել բանալու գոր-
ծարաններին և արհեստանոցներին կից տաք մանկա-
նոցներ՝ բնակարաններ, ուր կարելի կը լինի կերա-
կրել ծծկեր յերեսաներին իրանց հարազատ մոր կրծ-
քով:

XIII.

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բազմական չե, յերբ որե՛քը պահանջում ե բան-
վորուհի— մօրը արգելել աշխատելու: Հասարարակու-
թյունը, պետությունը պարտավոր են այդ ժամանակա-
շրջանում ապահովել կնոջը:

Հա՛վ «հանգիստ» կը լիներ բանվորուհի—մոր
համար, յեթե նրան ուղղակի արգելեյին 4 ամիս վաս-
տակելու՝ իր և իր յերեխային կերակրելու համար:
Այդ կը նշանակեր դատապարտել կնոջը սովամահու-
թյան:

Բանվորուհու աճիասանփի պահպանությունը պի-
տի էջել նաև մայրության ապահովությունը պետու-
թյան հաշվին:

Մայրության նման ապահովություն կամ ապա-
հովագրումն արդեն հաստատված ե 14 յերկրներում.
Գերմանիայում, Ավստրիայում, Հունգարիայում,
Լյուքսեմբուրգում, Անգլիայում, Իտալիայում, Ֆրանսի-
այում, Ավստրալիայում, Նորվեգիայում, Սերբիա-
յում, Ռումանիայում, Բոսնիա-Հերցեգովինայում և
Պորտուգալիան յերկրներում:

Տասն և մեկ յերկրներում բանվորուհիները ապա-
հովագրված են ապահովագրական դրամարկղներում,
ուստի յուրաքանչյուր շաբաթ մուծում են իրանց վը-
ճարը: Մենդաբերության ժամանակ կնոջը տրվում ե
ոժանդակություն դրամարկղից փողով (տարբեր յեր-
կրներում տարբեր քանակությամբ, բայց վնչ մի տեղ
յերբեք աշխատավարձից բարձր չի տրվում) նաև
բժշկի ու մանկաբարձուհու ոգնություն:

Իտալիայում բանվորուհին ապահովագրված ե
առանձին մայրության դրամարկղներում, ուր վճար-

ներ մուծում են՝ յնքը բանվորուհին, ձեռնարկութեան
 տերը և լրացուցիչ վճարը մտցվում և պետութեան կող-
 մից: Այնուամենայնիվ, այստեղ ել ապահովագրութեան
 ծանրութեանը կրում և բանվորուհին: Փրանսիայում
 ու Ավստրալիայում բանվորուհին պնջ մի վճար չի
 մտցնում գրամարկղը: Այդ յերկրներում յուրաքան-
 չյուր անապահով մայր՝ լինի նա ամուսնացած կամ վոչ
 ամուսնացած, պետութեանից ստանում և ոգնութուն.—
 Փրանսիայում 8 շաբաթվա համար ստանում են 20
 —50 կոպ. որական, յերբեմն նույնիսկ ավելի, դրա-
 նից դուրս բժշկի ու մանկաբարձու ոգնութուն, իսկ
 Ավստրալիայում 30 ուր. միանվագ նպաստ: Փրան-
 սիայում գրանից դուրս գործը կազմակերպված և այն-
 պես, վոր յուրաքանչյուր ծննդաբերի մտտ հաճախում
 և «սոխարինոյ տանտիկին»: Ընդհանրապես դա լի-
 նոճ և ծննդաբերի հարևան-ընկերուհիներից մեկը,
 վորն արդեն անցած և լինում ձրի դասընթացքը, թե
 ինչպիս պիտի խնամել ծննդաբերին և նորածնին: Նա
 ամեն որ գալիս և, քանի դեռ ծննդաբերին
 հրամայված և պառկած մնալ, հավաքում և բնակա-
 րանը, յեփում կերակուր, խնամում մանկանը և այդ
 աշխատանքի համար նրան վճարում են գրամարկղից:
 Փրանսիայում, Չվեցերիայում, Գերմանիայում և
 Ռումանիայում ապահովագրական գրամարկղից նպաստ
 են ստանում նաև ծիծ սվոյ մայրեր: Այսպիսով ար-
 դեն արվում են մայրութեան ապահովութեան առա-
 ջին քայլերը:

XIV

Ի՞ՆՉ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Սակայն հասկանալի չէ, վոր այդ դեռ շատ քիչ
 է: Բանվոր դասակարգը աշխատում և ձեռք բերել

այնպիսի մի վիճակ, վոր մայրութեան ամբողջ ծանրութիւնը վերացվի կնոջ թոյլ ուսերից և փոխադրվի հասարակութեան վրա, վորպեսզի որեւէ քն ու պետութիւնը թեթևացնեն կնոջ ամենադառն հոգւը՝ նյութականը — դրամականը:

Թեև բանվոր դասակարգը գիտի և այն, թե մոր ու մանկան հոգատարութիւնը իր վրա կը վերցնի միայն նոր հասարակութիւնը՝ հաւեքաւս, մեծ բնանիւքը, վորի մասին մենք պատմեցինք վերևում, բայց այժմ ել արդեն կարելի ե ձեռք բերել բանվորուհի մոր վիճակի թեթևացումն:

Շատ բան յե ձեռք բերված, մնում ե միայն շարունակել կռիվը, միահամուռ ուժերով՝ ավելին ստանալու համար:

Ամեն յերկրներում բանվորական կուսակցութիւնը պահանջում ե վոր մայրութեան ապահովագրութիւնը տարածվի անխտիր բոլոր կանանց վրա, ով ել վոր նրանք լինեն — բանվորուհի թե աղախին, արհեստավորուհի թե գեղջկուհի:

Նպաստ պիտի տրվի ծննդաբերութիւնից առջև և հետո ընդամենը 16 շաբաթ Սակայն նպաստը պիտի շարունակվի այն դեպքում, յեթե բժիշկը գտնի, վոր մայրը դեռ չի կազդուրվել, կամ մանկիկը դեռ բավականին չի ժբել:

Կինը նպաստ պիտի ստանա նույնիսկ այն ժամանակ, յերբ յերեխան մեռնում ե ծնվելուց մի քանի որ հետո, կամ յեթե ծնունդը վաղաժամ ե լինում, վորպեսզի մայրը հնարավորութիւն ունենա կազդուրվելու:

Տրվելիք նպաստը պիտի մեկ ու կես անգամ ավելի լինի բանվորուհու աշխատավարձից: Իսկ յեթե նպաստը տրվում ե այնպիսի կնոջ, վորը վարձով չի

քանուժ, պիտի վերցնել այդ վայրերում աշխատող կանանց աշխատավարձի միջին չափը և ավելացնել մեկ ու կես անգամ:

Անչափ կարևոր է որենսդրութեան մեջ նշանակել հետևյալը:

Վոչ մի պայմանով ոժանդակութունը չը պիտի լինի մեծ քաղաքներում մի ուրիշ, իսկ փոքր քաղաքներում ու գյուղերում 75 կ. պակաս որեկան: Հակառակ դեպքում քիչ աշխատավարձ ստացող մայրը որինակ որեկան 30 կ. ստացողը՝ ընդամենը պիտի ստանա 45 կոպ. (մեկ ու կես անգամ ավելի աշխատավարձից): Սակայն միթե հնարավոր է վոր մայրը 45 կոպեկով ձեռք բերի բոլորը ինչ անհրաժեշտ է իր և մանկան յոռողութեան ու ապրուստի համար: Ծիծ տվող մայրը նույնպես նպաստ պիտի ստանա ոժանդակութեան գրամակցից կրճով կերակրելու ամբողջ ժամանակվա ընթացքում, մինչ պակաս 9-ը ամսից: Նպաստի քանակը կարող է կազմել աշխատավարձի թեկուզ կեսը:

Նպաստը պիտի տրվի մայրերին յերկու նվազ. ծննդաբերութեանից առաջ ու հետո և ուղղակի իրեն՝ մոր ձեռքը պիտի հանձնել, կամ այն անձնավորութեանը, վորին նա իր փոխարեն վստահել է ստանալու այդ նպաստը:

Ծննդկանին ապահոված պիտի լինի բժշկի ու մանկաբարձուհու ձրի ոգնութեանը, նա պիտի ունենա ձրի հսկողութեան ու խնամք և բացի այդ պիտի ըստանա «փոխարինող տանտիկնոջ» ոգնութեանը, ի՛նչպես այդ տեղի ունի Ֆրանսիայում, մասամբ Գերմանիայում և Անգլիայում:

Իրենցից, բանվորներից ընտրված հսկողութեան

պիտի նշանակված լինի, թե արդյոք որենքի բոլոր կետերն են, ճշտութեամբ իրագործվում ծննդաբերը արդյոք ստացել է այն ամէնը, ինչ որինքով իրավունք ունի ստանալու:

Որենքով ծննդաբերն ու իրանց կրծքով կերակրող մայրերը պիտի իրավունք ունենան ստանալու քաղաքային կամ գավառական ինքնավարութեան դրամարկղից ձրի կաթ և նորածնի համար՝ լրիվ սնիւ:

Բանվորական կուսակցութիւնը պահանջում է նույնպէս, վար քաղաքը, գավառը կամ ապահովագրական գրասենտրալները գործարաններին կից քաղաքի, գավառի ու գործարանատիրոջ հաշվին հիմնեն մօտէնէր (ЯСЛН) ծծկերների համար հարմար տեղերում, վար պեսզի յուրաքանչյուր կերակրող բանվորուհի հնարավորութեան ունենա գնալու կերակրելու իր գավառին՝ որենքի հիման վրա տված ընդմիջումի ժամանակ:

Մտուրները գործերը պիտի վարեն վնչ թե տիկնայք-բարեգործուհիները, այլ իրենք՝ բանվորուհի մայրերը:

Քաղաքը, գավառը կամ ապահովագրական գրասենտրալները պարտավոր են հիմնելու իրենց հաշվին բավականին թվով՝ 1. ծննդաբերական ապաստարաններ, 2. մենակույց և հաճախ անգործ հղի կամ կերակրող մայրերի համար ապաստարաններ, 3. ձրի բժշկակական ոգնութեան հատկապէս յերեխաների և մայրերի համար, վար պեսզի բժիշկը կարողանա հետեւել հղիութեան ընթացքին, խորհուրդներ, ցուցմունքներ տալ կերակրող մորը՝ յերեխային խնամելու կանոնների առթիւ: 4. Կլինիկաներ (համալսարանին կից բժշկանոցներ) հիվանդ յերեխաների համար, վորպիսին հիմնել է «Բանվորուհիների Լիգան» Անգլիայում:

5. մանկապարտեզներ, ուր մայրերը կպահեն իրենց 2—5 տարեկան յերեխաներին, քանի դեռ իրենք աշխատում են: Հիմա մայրը վերադառնում է աշխատանքից հոգնած, հյուժված, նրան հարկավոր է հանգիստ, դադար, բայց այստեղ մանկիկները մնում են քաղցած, անվառ ու թափթփված... Անմիջապես լծվիլը նորից աշխատանքի: Բայց բոլորովին այլ է, յերբ մայրը վերջացնելով աշխատանքը կմտնի մանկապարտեզ յերեխաների հետևից, յերեխաները կուշտ, մաքուր, ուրախ՝ «հետաքրքիր» նորություններով զնոււմ են մօր հետ ձրտձտալով: Ավելի մեծերը ոգնում են մօրը տնտեսութեան գործերում. մանկապարտեզում այդ ել են սովորեցնում, և նրանք ել պարծենում են իրանց նոր գիտութեամբ: 6. Բացի այս բոլորը, քաղաքային ինքնավարութունը պարտավոր է հիմնել յերեխաներին խնամել սովորեցնելու ձրի դասնթացքներ մայրերի և յերիասարգ ազդիկների համար:

Յեւ վերջապես, ձրի ճաշ և նախաճաշ հղի ու ծիծ տվող բանվորուհիների համար:

Բայց այս բոլոր միջոցները չը պիտի կրեն «բարեգործութեան» դառն բնույթ:

Հասարակութեան յուրաքանչյուր անդամի, կը նշանակե նաև բանվորուհիների իրավունքն և, յուրաքանչյուր քաղաքացու, քաղաքացուհու իրավունքն է՝ պահանջել պետութեանից ու հասարակութեանից հոգալու իր քաղաքացիների մասին:

Ապա ինչո՞ւ մարդիկ պետութեան ստեղծեցին յիթե վոչ նրա համար, վոր նա հոգա բոլորի բարեկեցութեան մասին: Ներկայումս յերկրագնդի յերեսին վոչ մի տեղ այդ չը կա, բացի Սորհրդային հանրապետութեանները: Մնացած յերկրներում իշխանութեանը հարուստների ու սեփականատերերի ձեռքին

եւ Սակայն բոլոր յերկրների բանվորներն ու բանվորուհիները աշխատում են ձեռք ձգել իշխանությունը վորպեսզի հասարակութունն ու պետությունը իրապես դառնան մի մեծ համերաշխ ընտանիք, ուր բոլոր յերեխաները հավասար են, ուր բոլորի մասին հոգ ետանում ընտանիքը միակերպ: Այն ժամանակ մայրերի վիճակն եւ այլ կր լինի, այն ժամանակ գերանդավոր մահը կը դադարեցնի իր առատ հունձը նորածինների շրջանում:

XV.

ԻՆՆԱԿԱՆ ԴՆԻՑԻ ԱՆԻ ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐ ԲԱՆՎՈՐՈՒՆԻՆ

Ինչպէս ձեռք բերել այդ բոլոր պահանջները, ինչ ե հարկավոր անել:

Հարկավոր է, վոր բանվոր դասակարգի յուրաքանչյուր կին-անդամը, կարդալով այս գրքույկը, մի կողմ չբաշլի և անտարբեր չմնա, այլ պաշտպանի բանվորական շարժումը, այն շարժումը, վոր մարտունչում է բոլոր վերոհիշյալ պահանջների համար, վորը հին աշխարհից նվաճումներ ե անում՝ կերտելով մի նոր և ավելի լավ ապագա, ուր այլևս չեն լինի մայրական դառն արցունքներ, ուր մայրության խաչը կփոխաբերնվի կնոջ վեհ հարպանքով և ուրախությամբ:

Հարկավոր է միայն ասել, «ույժը միության մեջն ես»: Վորքան շատ և շուտ, մենք, բանվորուհիներս մանկեր ու մասնակցենք բանվորական շարժմանը, այնքան ավելի մեծ կլինի մեր ույժը, այնքան ավելի շուտ ձեռք կբերենք մեր ցանկալին. . .

Գործը վերաբերում է մեր յերջանկությանը, մեր յերեխաների կյանքին և ապագային:

ՀՀ Ազգային գոտարան




NL0836034

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ I Գործարանի վերառեսչի կինը — Մարիամիկը.

- » II Լվացարար—Մարիամիկը
- » III Աղախին—Մարիամիկը
- » IV Ներկարարունի—Մարիամիկը
- » V Ծննդաբերություն
- » VI Մայրության խաչը
- » VII Մեռնում են ճանճերի պես...
- » VIII Վարձու աշխատանքն ու մայրությունը
- » IX Վճիռն և յելքը
- » X Ի՞նչպես կարող ե լինել
- » XI Ի՞նչ կարող ե անել որենքը
- » XII Մայրության պահպանությունը
- » XIII Մայրության ապահովագրումը
- » XIV Ի՞նչ են պահանջում բանվորները
- » XV Ի՞նչ պիտի անի յուրաքանչյուր բանվորունին



-50-

ՀՀ Ազգային գրադարան



NL0836028

W92

140